

ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱ

Ս. թ. սեպտեմբերի 25—26-ին տեղի ունեցավ Հայաստանի ԿՊ Կենտկոմին կից Պարտիայի պատմության ինստիտուտի և Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի գիտական սե- սիան՝ նվիրված Բաբվի 26 կոմիտարների շարա- նենգ սպանության 40-ամյակին և Ստեփան Շա- հումյանի ծննդյան 80-ամյակին։ Սեփայի աշ- խատանքին մասնակցեցին Հին բուլղերներ, Բաբվի Կոմունայի մարտերի մասնակիցներ, ռեսպուբլիկայի ականավոր գիտնականներ, դրուներ, բարձրագույն ուսումնական հաստա- տությունների ամբիոնների դասախոսներ, գի- տա-հետազոտական ինստիտուտների աշխատա- կիցներ և ուրիշներ։

Գիտական սեփան ներածական խոսքով բաց արեց Հայաստանի ԿՊ Կենտկոմի ագիտացիայի և պրոպագանդայի բաժնի վարիչ րնկ. Գ. Հա- յանը։ Նա ընդհանուր գծերով բնութագրեց Ան- դրրկովկասում Սովետական իշխանության առա- ջին դրուակալի Բաբվի Կոմունայի գործունեու- թյունը և նշեց, որ այն, ինչ հաջողվեց անել Բաբվի Կոմունային իր գոյության կարճ ժա- մանակամիջոցում՝ մի փառավոր դրվագ է ոչ միայն Անդրկովկասի ու Ռուսաստանի, այլև ամբողջ աշխարհի բանվոր դասակարգի ռեու- լուցիոն պայքարի պատմության մեջ։ Այնուհե- տև Գ. Ա. Հայրյանը սեղմ ու ամփոփ բնութա- գրեց Վ. Ի. Լենինի հավատարիմ աշակերտ ու մարտական գինակից, Կոմունիստական պար- տիայի և Սովետական պետության ականավոր գործիչ Ստեփան Շահումյանի հասարակական- քաղաքական գործունեությունը։

Բաբվի հերոսական Կոմունայի գործունեու- թյան մասին զեկուցում կարգաց պատմական գիտությունների թեկնածու Գ. Ա. Գալոյանը, որը լուսաբանեց Բաբվի Կոմունայի պայքարի ու գործունեության փայլուն էջերը։

Ստեփան Շահումյանի կյանքին ու ռեուլու- ցիոն գործունեությանը նվիրված զեկուցումով հանդես եկավ Մարքսիզմ-լենինիզմի ինստիտու- տի հայկական ֆիլիալի գիրեկտոր, պատմական գիտությունների թեկնածու խ. Հ. Բարսեղյանը։ Զեկուցուր հիմնական գծերով շարադրեց Շա- հումյանի կյանքի անցած ուղին, հաղորդեց շատ նորություններ, որոնք հայտնաբերվել են վեր- ջերս և Շահումյանի գիտական կենսագրության համար բացառիկ արժեք են ներկայացնում։

Սեփայի աշխատանքի մասնակիցները լար- ված ուշադրությամբ լսեցին Հին բուլղերի, Բար- վի Կոմունայի Արդարադատության նախկին կո- միսար, այժմ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Ա. Բ. Կարին- յանի հուշերը։ Նկարագրելով պատմական այն բացառիկ ծանր պայմանները, որոնց մեջ հան- դես եկավ Բաբվի Կոմունան, Ա. Բ. Կարինյանը նշեց, թե ինչպես ռեուլուցիոն բանվորներն ու նրանց առաջնորդները հերոսաբար բարձրացան կոնտրռեուլուցիայի բազմաթիվ ու բազմազան գերազանց ուժերի դեմ, դրսևորեցին նվիրվա- ծություն, արիություն, անձնագոհության ու կազմակերպական տաղանդի վառ օրինակներ։

Գիտական սեփայում Բաբվի 26 կոմիսար- ների մասին զեկուցեց պատմական գիտություն- ների թեկնածու Վ. Ներկարարյանը։ Վ. Ի. Լենինի և Ստեփան Շահումյանի նամակագրությանը և հանդիպումներին էր նվիրված պատմական գիտությունների թեկնածու Ե. Խալեյանի զեկու- ցումը։ Սեփայում լավեց նաև Լ. Խուրշուդյանի «Ստեփան Շահումյանի պետական գործունեու- թյունը 1917—1918 թթ.» զեկուցումը։ Վերջում հետաքրքիր և պատմական արժեք ներկայացնող հուշերով հանդես եկան Բաբվի Կոմունայի հե- րոսական պայքարի մարտիկներ Մ. Յուզբաշ- յանը և Կ. Ղազարյանը։

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԲԱՐՔԱՌԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԳԱԿՅՈՒԹՅՈՒՆ

ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի համամիութենական բարբառագիտական կոորդինացիոն խորհուրդը վաղուց ի վեր տրագիցիա է դարձրել տարին մեկ անգամ Մոսկվա հրավիրել մեր երկրի տարբեր լեզուների մասնագետներին ու բարբառագետներին և հանրագումարի բերել Սովետական Միության առանձին լեզուների բարբառների ուսումնասիրության ուղղությամբ կատարված աշխատանքները:

Բարբառագիտական կոորդինացիոն խորհուրդը իր տարեկան խորհրդակցություններում ոչ միայն ամփոփում է տեղերում կատարվող բարբառագիտական ամենատարբեր բնույթի աշխատանքները, մի բան, որ հնարավորություն է՝ ստեղծում մոտիկից ծանոթանալու եղբայրական ռեսպուբլիկաներում տարվող այդ կարգի աշխատանքներին, ոչ միայն նպաստում է առաջավոր փորձի փոխանակմանը, այլև որոշակի օգնություն է ցույց տալիս առանձին լեզուների բարբառների ուսումնասիրության մեթոդների մշակման գործում, կարծիքների փոխանակման միջոցով հնարավոր է դարձնում ընդհանուր լեզվաբանական, բարբառագիտական տեսական ու գործնական շատ և շատ պրոբլեմների լուծումը և դրանով իսկ մեծ հեռանկար բաց անում սովետական բարբառագիտության հետագա զարգացման համար:

Համամիութենական բարբառագիտական կոորդինացիոն խորհուրդը իր հերթական՝ չորրորդ խորհրդակցությունը, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրավերով, անցկացրեց Երևանում:

Խորհրդակցության աշխատանքներին մասնակցելու համար Երևան էին ժամանել Մոսկվայի, Լենինգրադի, Ուկրաինական, Բելոռուսական, Վրացական, Ադրբեջանական, Էստոնական, Լիտվական, Մոլդավական, Կիրգիզական, Թուրքմենական, Թաթարական, Բաշկիրական, Իսլախտանի և այլ միութենական ու ավտոնոմ ռեսպուբլիկաների լեզվաբաններն ու բարբառագետները:

Խորհրդակցության աշխատանքներին մասնակցում էին ականավոր գիտնականներ, ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամներ Ռ. Ի. Ավանեսովը, Վ. Մ. Ժիրմանսկին, Վրացական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Ա. Ս. Չիրորաֆան, Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամներ Ա. Ս. Ղարիբջանը, Լ. Մ. Մելիքսեթ-բեկը, Ադրբեջանական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Մ. Ե. Շիրալիևը, ֆիլոլոգիական գիտությունների դոկտորներ Վ. Գ. Օրլովան, Ն. Ա.

Բասկակովը, Վ. Ս. Ռոստորգուևան, Ե. Ա. Բոկարևը և ուրիշներ:

Խորհրդակցությունը, որ տևեց սեպտեմբերի 27—29-ը, քննարկեց բարբառագիտությանը վերաբերող այնպիսի տեսական կարևոր հարցեր, ինչպիսիք են՝ լեզվի և նրա ճյուղավորումների՝ տերիտորիալ բարբառների ու տեղական խոսվածքների փոխհարաբերությունը, առանձին լեզուների բարբառների առաջացումն ու նրանց ուսումնասիրման եղանակները, բարբառների գրառումն ու գիտական տառագրությունը, ընդհանուր և ռեգիոնալ բարբառային բառարաններ, բարբառագիտական փարսեզներ ու ատլասներ կազմելու սկզբունքները և այլն:

Այս հարցերի շուրջը խորհրդակցության նիստերին զեկուցումներով հանդես եկան Ռ. Ի. Ավանեսովը, Ա. Ս. Ղարիբջանը, Վ. Գ. Օրլովան, Մ. Ե. Շիրալիևը, Վ. Ռ. Ռոստորգուևան, Ն. Ա. Բասկակովը, Հ. Մ. Մկրտչանը, Ա. Ս. Լիսենկոն, Ռ. Հ. Բաղրամյանը, Լ. Թ. Մահմուդովան:

Զեկուցողները նշեցին, որ տերիտորիալ բարբառների առանձնահատկությունների պատմա-համեմատական և աշխարհագրական ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս թափանցելու լեզվի պատմության խորքերը, հետևելու լեզվի էվոլյուցիոն զարգացմանը. բացահայտելու նրա կապը ազգակից և ոչ ազգակից լեզուների հետ, ինչպես նաև պարզելու ժողովրդի և նրա տվյալ բարբառը կրող հատվածի գաղթների ու տեղաշարժերի պատմությունը:

Խորհրդակցությունը լեզվի և բարբառների փոխհարաբերության հարցը քննարկելիս մեծ ուշադրություն դարձրեց այժմ բանի վրա, որ լեզվի և բարբառների տարբերակման համար կարևոր են ոչ միայն լեզվի կառուցվածքի ընդհանրությունները կամ տարբերությունները, այլ նաև սոցիալ-պատմական և կուլտուրական ընդհանրությունները: Այս դրույթի հաստատման համար իր զեկուցման մեջ հետաքրքրական փաստեր բերեց պրոֆ. Ա. Ս. Ղարիբջանը: Զեկուցողը ցույց տալով հայ բարբառների բաղադրական համակարգի կրած փոփոխությունները հիմք լեզվի համեմատության համար, նշեց, որ հայ բարբառներն այնքան են հեռացել ընդհանուր լեզվից, որ առանձին բարբառների ներկայացուցիչներ հաճախ դժվարությամբ են հասկանում միմյանց. այդուհանդերձ ունենալով սոցիալ-պատմական և կուլտուրական ընդհանրություն, նրանք պահպանել են հայոց լեզվի ընդհանուր բնույթը:

Խորհրդակցությունը հատուկ ուշադրությունը քննեց բարբառային բառարաններ կազմելու հարցը: Բարբառների բառային կազմի բազմակողմանի ուսումնասիրության համար, ինչպես հայտնի է, մեծ նշանակություն ունեն ընդհանուր և ռեգիոնալ բարբառային բառարանները: Այդ կարգի բառարաններ կազմելու գործը մեծ թափ է ստացել մի շարք միութենական և ավտոնոմ ռեսպուբլիկաներում:

Սակայն անհրաժեշտ է նշել, որ բարբառային բառարաններ կազմելու սկզբունքները քննելիս, խորհրդակցության ժամանակ ի հայտ եկան որոշ տարակարծություններ. ոմանք դրանում էին, որ բարբառային բառարաններում պետք է ընդգրկել բարբառային բոլոր աիպի բառերը, այդ թվում պրոֆեսիոնալ, տերմինաբանական և այլ կարգի բառեր, իսկ ոմանք կարծիքով պրոֆեսիոնալ և տերմինաբանական բառերի ընդգրկում անհրաժեշտ չէ: Այս հարցի վերջնական լուծման համար որոշվեց բազմակողմանիորեն ուսումնասիրել առանձին լեզուների բարբառների բառային կազմի առանձնահատկությունները և այդ հարցը քննության առնել հաջորդ Համամիութենական բարբառագիտական խորհրդակցությանը:

Բարբառների և տեղական խոսվածքների մենագրական ուսումնասիրության համար անհրաժեշտ համարվեց գործադրել նաև քարտագրման եղանակը:

Փննարկման ենթակա մյուս կարևոր հարցը բարբառագիտական քարտեզներ և ատլասներ կազմելու աշխատանքների ընդլայնումն էր: Մի շարք տարիների ընթացքում մեր երկրի առանձին լեզուների համար արդեն կազմվել են այդ կարգի քարտեզներ: 1957 թվականին լույս է տեսել ռուսաց լեզվի ատլասի առաջին հատորը: Աշխատանքներ են տարվում կազմելու բելոռուսական, ուկրաինական, լիտվական, լատիշական և այլ լեզուների ատլասներ: Սկսված են աղբյուրեղանական և տաջիկական լեզուների քարտեզ կազմելու աշխատանքները:

Բավական աշխատանք է կատարված նաև լեզվաբանական մեծ հետաքրքրություն ներկայացնող հայերենի բարբառագիտական քարտեզ կազմելու ուղղությամբ: Սակայն հայ բարբառների քարտեզ կազմելու գործում մեծ դժվարություններ կան, եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ շատ բարբառախոս հայեր բնակվել են եղել և գաղթել իրենց հայրենիքից, սփռվել աշխարհով մեկ: Այդ պատճառով անհրաժեշտ է աջակցել ՀՍՍՌ ԳԱ Լեզվի ինստիտուտին՝ բարբառային նյութեր հավաքելու գործում, որի շնորհիվ հնարավոր կդառնա կարճ ժամանակամիջոցում ստանալ պակասող բարբառային նյութերը: Հապաղելը այդ գործում մեծ վնաս կրերի, քանի որ 10—15 տարուց շատ հայ բարբառներ կանհետանան, կանցնեն պատմության դիրկր:

Խորհրդակցությունը քննեց նաև մի շարք գործնական հարցեր, որոնք կապված էին բարբառների գրառման տեխնիկայի, ձայնագրման եղանակների, բարբառային նյութեր հավաքելու, քարտագրման մեթոդների հետ: Այս հարցերի շուրջը զեկուցումներով հանդես եկան ՍՍՌՄ ԳԱ Լեզվաբանության ինստիտուտի ավագ դիա. աշխատակից Ս. Ս. Վիսոտսկին, ՍՍՌՄ ԳԱ Մոլդավիայի ֆիլիալի լեզվի և գրականության ինստիտուտի գիտ. աշխատակից Վ. Ս. Սորբալեն և ուրիշները:

Տեղերում և իրենց կողմից կատարվող բարբառագիտական աշխատանքների մասին հետաքրքրական հաղորդումներով հանդես եկան Ն. Նաթանյան (Վրաստան), Ա. Ունիվերեն (Էստոնիա), Յու. Սենկուս (Լիտվա), Ն. Բիրիլյոն (Բելոռուսիա), Ս. Բաղդասարյան (Հայաստան), Զ. Ղարիպով (Բաշկիրիա), Գ. Բակինովան (Կիրգիզիա) և ուրիշները:

Խորհրդակցությունն անցավ գործարար մթնոլորտում, դիտական բարձր մակարդակով և քննարկված հարցերի շուրջն ընդունեց համապատասխան որոշում:

Հ. ԿՈՍՏԱՆՅԱՆ, Հ. ՄԿՐՏՉՅԱՆ

ԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Գրականության և արվեստի թանգարանը 1958 թվականի ընթացքում հարստացավ մի շարք նոր արժեքավոր արխիվային ֆոնդերով:

Գրանց մեջ առանձնահատուկ տեղ է զբաղում ակնաավոր հայագետ, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական ան-
20 հանգստ, Խ 3

դամ Մանուկ Աբեղյանի արխիվն ու անձնական գրադարանը, որը սիրահոծար թանգարանին նվիրեց հանգուցյալի որդին՝ Մհեր Աբեղյանը:

Մ. Աբեղյանի արխիվը արժեքավոր շատ փաստաթղթեր է պարունակում հայագիտության վերաբերյալ: Հիշատակության արժանի են հատկապես հայ ժողովրդի անմահ էպոս Ճվառ-

նա ծոերի» տարբեր պատումների ուսումնասիրության հետ կապված գրառումները, մշակումները և այլ նյութեր:

Մեզ համար կարևոր են հայոց գրականության պատմության վերաբերող գրառումները, որոնց հիման վրա ականավոր հայագետը ստեղծել է հայ հին գրականության պատմության երկհատոր կապիտալ ուսումնասիրությունը:

Արեղյանը երկար տասնամյակներ Կոմիտասի հետ միասին, գրի է առել ու հավաքել ժողովրդական երգեր, առածներ, հանելուկներ, Արխիվում գտնում ենք հայ ժողովրդի բանահյուսության ընտիր նմուշներ պարունակող մի քանի տասնյակ տետրեր, որոնց նյութը օգտագործել է Արեղյանը «Հայ ժողովրդական խաղիկներ» և այլ աշխատություններում:

Հայագիտության համար մեծ արժեք ներկայացնող փաստաթուղթ է «Հազար ու մի խաղ» ժողովածուի սկզբնական ձևագիրը, որի վրա աշխատել են Մ. Արեղյանը և Կոմիտասը, թողնելով բազմաթիվ նշումներ:

Արեղյանի արխիվում արժեքավոր են հայոց լեզվի տաղաչափությանը, շարահյուսությանը, ուղղագրությանը և այլ հարցերին վերաբերող նյութերը, որոնք օգտագործվել են նրա հայտնի «Հայոց լեզվի տաղաչափություն», «Հայոց լեզվի շարահյուսություն», «Հայոց լեզվի տեսություն» և այլ հետազոտություններում:

Արխիվի մասն են կազմում Արեղյանի մի շարք հոգվածների, գրախոսությունների, գիտական ելույթների բնագրերը: Դրանց մեջ է գտնվում Հայկական ՍՍԽ Գիտությունների ակադեմիայի բացման առթիվ Արեղյանի բնդարձակ ելույթը, որի կրճատ մասն է միայն հրատարակվել: Արխիվում կան նաև այլ կարգի փաստաթղթեր (պաշտոնական գրություններ, պայմանագրեր, նամակներ՝ ստացված զանազան անձերից և այլն), ինչպես և Արեղյանի ուսանողական և գիտական կյանքին վերաբերող փաստաթղթեր (գոկոտորական աստիճանի վկայականը գերմաներեն լեզվով, Գեորգյան ճեմարանի ավարտական վկայականը և այլն):

Նկարիչ Մհեր Արեղյանը վերոհիշյալ արխիվային ֆոնդի հետ միասին թանգարանին է հանձնել նաև ակադեմիկոս Արեղյանի մասնագիտական գրադարանը, բաղկացած 765 կտոր հայերեն, ռուսերեն, գերմաներեն, ֆրանսերեն և այլ լեզուներով գրքերից: Դրանց մի մասը իրենց վրա կրում են Արեղյանի նշումները, իսկ մի շարք գրքեր էլ ընծայականներով Արեղյանին են նվեր տրվել ականավոր հայ գրողներից և հասարակական գործիչներից՝ ինչպես, օրինակ, Հովհ. Թումանյանից, Պերճ Պողոսյանից, Ալ.

Ծատուրյանից, Հովհ. Հովհաննիսյանից և ուրիշներից:

Արխիվի հետ ստացված են նաև Մանուկ Արեղյանի անձնական գործածության իրերից մի քանիսը:

Թանգարանը առաջիկա տարվա սկզբից կսկսի գիտական մշակման ենթարկել ականավոր հայագետի այս մեծարժեք արխիվը:

* * *

Թանգարանը վերջերս Ֆրանսահայ Մշակութային Միության եռանդուն գործիչ Ա. Դարբինյանի միջոցով ստացավ բանաստեղծ Վ. Մալեզյանի անձնական արխիվի մի մասը, զետեղված՝ խնամքով դասավորված, համարակալված թղթապանակների մեջ, որոնք պարունակում են հետաքրքրական շատ փաստաթղթեր հայ գրականության պատմության, հայ հասարակական մտքի պատմության և առհասարակ հայ ժողովրդի մոտավոր անցյալի կրթական, քաղաքական և մշակույթային կյանքի մասին:

Վ. Մալեզյանի արխիվի տարբեր թղթապանակներում գտնվում են հայկական դատին և ազգային հարցին վերաբերող ուշագրավ փաստաթղթեր (նամակներ, պաշտոնական գրություններ՝ որոշումների պատճեններ և այլն) գրված հայերեն, ֆրանսերեն և այլ լեզուներով, հայ գործիչների նամակներ ու գրություններ՝ կապված հասարակական քաղաքական հարցերի հետ, Մալեզյանի գրական գործունեությանը վերաբերող տպագիր և անտիպ նյութեր, այդ թվում հարյուրից ավելի նամակներ գաղութահայ գրողներից:

Արխիվը պարունակում է հետաքրքրական շատ փաստաթղթեր գաղութահայ մշակույթային և դպրոցական կյանքի, հատկապես զանազան միությունների, կրթական, բարեգործական և այլ ընկերությունների, թերթերի խմբագրությունների գործունեության վերաբերյալ:

Արխիվի կարևոր թղթապանակներից մեկը ունի հետևյալ լեզուները. «Հայտնի գրագետներու և մտավորական գործիչներու կողմանն Վ. Մալեզյանին ուղղված հնադրոշմ և այլ կարևոր նամակներ (1889—1949)»:

Այստեղ կան շատ արժեքավոր և անտիպ նամակներ հայ ականավոր գրողներից և հասարակական գործիչներից՝ Եղիա Տեմիրճիբաշյանից, Արշակ Չոպանյանից, Ա. Արփիարյանից, Տիգրան Կամսարականից, Թլկատինցուց, Ռուրեն Որբերյանից, Հովհաննես Ասպետից, Գրիգոր Զիլինգարյանից և շատ ուրիշներից: Այդ նամակները փաստական հարուստ նյութ են պարունակում հայ գրականության արևմտահայ հատվածի մասին:

Նվազ արժեք չեն ներկայացնում այն 260 նամակները, որոնց հեղինակները ավելի մոտ ժամանակի մարդիկ են, ինչպես Հայկանուշ Մարկ, Թորոս Ազատյան, Արշակ Ալպոյաջյան, Մարի Աթմաջյան, Լևոն Մեսրոպ և այլն:

Վահան Մալեզյանի արխիվում է գտնվում Պետրոս Աղամյանի մի բանաստեղծության

ինքնագիրը՝ գրված 1890 թ. և ուղղված Մալեզյանին:

Վահան Մալեզյանը իր նամակով հայտնել է Թանգարանի դիրեկցիային իր մտադրությունը՝ արխիվի մնացած մասը ևս Ֆրանսահայ Մշակութային Միության միջոցով Հայաստան ուղարկելու վերաբերյալ:

Գ. ՍՏԵՖԱՆՅԱՆ

ԱԿԱԳԵՄԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հալկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի նախագահությունը վերջերս որոշում ընդունեց 1959 թ. աշնանը երևանում հրավիրել հալագետների համաշխարհային համագումար: Ստեղծված է համագումարը նախապատրաստող կազմակերպչական հանձնաժողով Հալկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանի նախագահությամբ: